




ԿԵԼԻՔ ԵՆ ԵՆ ԶՆՆԱԼ

ԿԵԼԻՔ ԵՆ ԵՆ ԶՆՆԱԼ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 170

25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ՏՕՒԱՑՈՅՑ

Հոկտ.	25	†	Կիր. զձ.	Է. Ջկնի հաշին: Գիւտ հաշ:
	26		Բշ. զկ.	Սրբոց Հիպերիֆեանց:
	27		Դշ. զձ.	Ս. Սեւերիանոսի Սեբաստացւոյն եւ Բաբելայ ծերոյն եւ 84 աշակերտաց նորին:
	28		Դշ. զկ.	Պահոց:
	29		Եշ. աձ.	Ս. Բարադամու Անտիոքացւոյն եւ Խորն մանկանց Նիքեոսի:
	30		Ուր. աղ.	Պահոց:
	31		Շք. զձ.	Ս. Սեփաննոսի Հռոմայ հայրապետին եւ Բահանայից եւ սարկաւազաց եւ Ժողովրդոց որք ընդ նմա կատարեցան:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ

Չարորդ սարի Թ 24 Հոկտեմբեր 1914 Թիւ 170

«Մերական Քառանկյապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Առնաճառնոց շարքաքերը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն սրտազին կ'օրհնէ յիշեալ Շարքաքերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:
Նամակ Կարց. Մերի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեղեան Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
29 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմաստաւ:

ՂԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՏԵՂԱՊԱՀԻ ԽՆԴԻՐ

Վերջին ժամանակներս Տեղապահի
խնդիրը մեծապէս սուր հանդամանք մը
ստացաւ՝ թէ՛ հակառակորդներու կողմէ
այս խնդրոյ տրուած ալլընդայլոյ մեկ-
նութեանց եւ թէ՛ անոնցմէ գործուած
ամենավերջին ապօրինութեանց պատճա-
ռաւ: Մենք ցարդ խոհեմ լռութիւն մը
պահած էինք յայտմ մասին, բայց ի-
րարու ետեւէն դահավիժաբար գործուող
յանդդնութիւնները կը ստիպեն զմեզ
առ վաղը մի խզել լռութիւնը, եւ հա-

մառօտիւ տալ, ի շինութիւն միամտաց,
կարեւոր ինչ ինչ մեկնութիւններ եւ
լուսարանութիւններ:

Այս խնդրոյ նկատմամբ եկեղեցա-
կան օրինաւոր իշխանութեան, Կրօնա-
կան ժողովոյ, եւ առ հասարակ կղերի
դէմ, սովորական անգիտակից կամ չա-
րամիտ ենթադրութիւններով ամբաս-
տանութիւններ յերիւրուեցան, զորոնք
մի առ մի թուելով ու ջրելով, պարզած
պիտի ըլլանք նաեւ մեր փափաքած ման-
րամասնութիւնները:

1. Նախ եւ առաջ իբրեւ մեծ յան-
ցանք մը, կենսական եւ ամենակարեւոր
գործի մը մէջ կարի անտրամաբան եւ
անհետեւողական թեթեւամտութեան

կամ փոփոխամտութեան մը վերագրուեցաւ թէ՛ «Եկեղեցական իշխանութիւնը, որ ասկից երկուք ու կէս տարի առաջ, երբ կառավարական Պաշտոնաւարտութեան Տեղապահ Եպի մը ընտրութեան համար, եկեղեցական ծանր պատիժներ սպառնալով՝ թոյլ չէր տուած կղերին և հաւատացելոյ մասնակցիլ Տեղապահի ո՛չ ընտրութեան ո՛չ ընտրելութեան, հիմա, յախուռն և անխորհուրդ, ո՛չ միայն թոյլ կու տար, այլ ինք կ'ըլլար նախաձեռնարկ և ձեռնբէյ, անբաւելի թեթեւութեամբ և պարսաւելի շտապաւ»:

Արդ այս ենթադրութիւնը sqիսուքիւն նիւթոյ է, ինչպէս կ'ըսեն տրամաբանք: Քանզի յառաջ ապօրէն եղած մէկ բանը, ո՛չ թէ ժամանակը, այլ նիւթոյն, գործին էութեան իսկ փոփոխութիւնը, տարբերութիւնը կրցաւ օրինաւոր ընել:

Եւ յիշուի, ինչ հանգամանք ունէր ան առեւն Տեղապահի ընտրութիւնը: Պաշտոնաւարտին մէջ կը հրամայուէր պաշտօնանկ Պատրիարքին տեղ Տեղապահ Եպիսկոպոս մը ընտրել, ինչպէս սովորութիւն է քրիստոնեայ հասարակութեանց քով, ի պարապել այն պաշտօնին. ուստի՝ այս ընտրուողը պիտի ըլլար հոգեւոր պէտ մը Հայ Կաթողիկէ հասարակութեան, և կառավարութեան ալ այնպէս պիտի ճանչցուէր ձիշդ նոյն խնամտով կը շրջաբերուէր ժողովրդեան մէջ ալ այս ընտրութիւնը: Եւ նոյն իսկ այն հրաւիրագիրը, որ եկեղեցականներուն անգամ զրկուեցաւ, անիմանալի մոռցնութեամբ մը կը հրաւիրէր անկեալ Պատրիարք-Կաթողիկոսի տեղ Տեղապահ

մը ընտրելու: Ուստի ան առեւն կ'ուզուէր ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏ Տեղապահ մը ընտրել. ուստի Բարրիկութեան կառավարական պաշտօնանկութեամբ միայն՝ հասարակութեանն ընդհանրապէս կը յանդգնէին Կաթողիկոս մը պաշտօնանկ ընել. ծայրագոյն ամբարշտութիւն մին էր այդ, և անկարելին անմիտ փորձը:

Աս էր ուրեմն այն ժամանակուան Տեղապահի ընտրութեան խնամքը, նշանակութիւնը, ձեւը, էութիւնը: Արդ, քանի որ հոգեւոր պետ մը, Պատրիարք մը, Կաթողիկոս մը, Եպիսկոպոս մը՝ իբրեւ այն, պաշտօնանկ ընել տրուած չէ ո՛ր և է մարդկեղէն իշխանութեան, այլ միայն Քրիստոսի Փոխանորդին՝ Հռոմայ Ս. Քահանայապետին, հետեւաբար ո՛չ որ կրնար օրինաւորաբար ընդունիլ այնպիսի Տեղապահի մը ընտրութիւնը. և եկեղեցական բարձրագոյն իշխանութիւնը ո՛չ թէ միայն իրաւունք ունէր, այլ նաեւ ճիշդ ու ուշիտ ու խիստ պարտք ունէր արգիլելու այնպիսի անիրաւ ընտրութիւն մը, և նոյն իսկ ծանր պատիժներով խափանելու ամէնուն՝ որեւէ մասնակցութիւն անոր մէջ:

Այլ հիմա խնդիրը փոխուած է, քանզի պարզուած է. իւրաքանչիւր իշխանութիւն վերահասու եղած է իւր իրաւասութեան սահմաններուն, կամ մաս մըն ալ կրքերու մշտնջեն փարատելովը՝ չանգիտանալ կամ մոռցած ըլլալ ձեւացուցածը՝ հիմա, հանդարտ անդրադարձումով մը, կը խոստովանի երբ անկեղծ է. ի բաց տուեալ քանի մը անխիղճ յամառները, որոնք ամէն դնով շարունակել երգուընցած են իրենց անմիտ մոլորութեան մէջ, որով ամենամեծ

հետադարձութեամբ կ'ախարհէն ընդդէմ իւրա-
նի, կը դիմադրեն Քահանայապետա-
կան ծայրագոյն իշխանութեան: Այս-
պիսիները կաթողիկէ չեն, և կը նմա-
նին այն յամառ հրեաներուն, որոնք
հանապազ Հոգոյն Սրբոյ հակառակ
կեցան, եւ ա'յնքան տրամեցուցին և
յողնեցուցին զՏէրն Մէր Յիսուս Քրիս-
տոս՝ իրենց ժպիրհ, անտրամաբան և
ամբարտաւան հակաճառութիւններով:

Ուստի հիմա, երբ խօսքը կ'ըլլայ Տե-
ղապահի մը ընտրութեան, բայցարձա-
կապէս համոզում գոյացուած է թէ՛ այս
Տեղապահը միայն և միայն աշխարհա-
կան գործոց համար է որ կ'ընտրուի. նա
բնաւ չպիտի ունենայ հոգեւոր պէտի հան-
դամանքը — թէեւ ըլլայ Եպիսկոպոս
— , ո'չ կառավարութեան մօտ, ոչ հա-
սարակութեան ըմբռնումին մէջ. և թէ-
պէտ իբր կառավարական պաշտօնեայ
անկախ է, սակայն իբր եկեղեցական՝
բնականաբար ենթարկուած է Հոգեւոր
Պետին. և ինքը՝ թէեւ ձեռնհաս պիտի
ըլլայ կառավարութեան քով հասարա-
կութեան սոսկ աշխարհական գործերը
կարգադրելու, սակայն կրօնական և
խառն գործերը բնականաբար պիտի չկա-
րենայ անկախօրէն վճռել, տրամադրել,
կարգադրել. ասոնց մէջ՝ ընդ իշխանու-
թեանն է, կախուած է, պատասխա-
նատու է: Ո'չ մէկ եպիսկոպոս, ո'չ մէկ
եկեղեցական, ո'չ մէկ բարի կաթողիկէ
հաւատացեալ՝ այլազգ կրնայ ըմբռնել
Տեղապահական պաշտօնը, այժմու պա-
րագաններու մէջ:

Արդ, երբ խնդիրը այսպէս պար-
զուելու ըլլայ, ինքնին յօդս կը ցնդի
այն ձրի ամբաստանութիւնը, զոր կ'ու-
զեն բարդել մեր վրայ:

Ահաւասիկ ուրեմն պատճառը, որուն
համար այն ընտրութիւնը որ ներքին չէր
երկուքուկէս տարի առաջ, հիմա ներքին
կը դառնայ. որուն համար ան ստեն հո-
գեւորական պատիժներ սահմանուած
էին, և որ հիմա անկեղծօրէն կը փա-
փաքուի, այն պայմաններու տակ, ո-
րոնք զայն օրինաւոր կ'ընեն, և օգտա-
կար՝ մեր հապարակութեան ներկայ հան-
գամանաց մէջ:

2. Երկրորդ, առարկուեցաւ թէ,
«Եկեղեցականութիւնը որ ան ատեն չէր
ուզէր Տեղապահի մը ընտրուիլը, հիմա
այլեւայլ զաղտնի յետին միտքերով,
բուռն փափաք մը կը տածէ այս տե-
սակ պաշտօնեայ մը ունենալու. և այս
փափաքով ենթրկներ յերկրեց, դաւեր
սարքեց, որպէս զի իր այս նպատակին
հասնի»:

Ահա ամբաստանութիւնը, դառն և
չարամիտ. ասոնք ո'չ թէ միայն ըսուե-
ցան, չըջարեցուեցան, այլեւ գրուեցան
իսկ՝ հրապարակաւ: Եւ հաւատացի'ն
ալ... կարելի է: Եւ ահա հոս է մեր
ազգային միջավայրին ողբալի վիճակը.
մէկու մը անմիտ կամ չարամիտ ենթա-
դրութիւնը մէջտեղ կը նետուի, և
բերնէ բերան կ'ըլլայ ստուգութիւն.
սուտը ճշմարիտ կ'ըլլայ. և այն սուտին
վրայ կը շինուին այլ եւս անհեղեղ
շինուածներ: Աս ցաւալի հոգեբանական
վիճակը, որ ոմանց տգիտութեան և
ոմանց ալ չարամտութեան հետե-
ւանքն է, սովորական է այս դժբախտ
միջավայրին, և որ վատթարագոյն է՝
այս վիճակը մեծ գոհունակութիւն կը
պատճառէ շատերուն, անով կը զուար-
ճանան, իրենց խօսակցութիւնը անով կը
պարարի. շատերը անով մուտ կը գրո-

նեն ընկերութեան իրենց համար ան-
մատչելի խաւերուն մէջ: Բայց ո՛րչափ
չարիք կ'առթեն....

Տեսէ՛ք հիմա. այս Տեղապահի խնդ-
րոյն մէջ ի՛նչ է իրականութիւնը: Եկե-
ղեցական իշխանութիւնը բնաւ ամենե-
ւին չէր իսկ խորհած Տեղապահ մը
ընտրել տալու, այս բանը մտքէն ալ
չէր անցուցած:

Այս խնդիրը ուղղակի, անընդմիջա-
պէս և յանակնկալս առաջարկուեցաւ
Օսմ. Կառավարութեան Արդարութեան
և Կրօնից Նախարար Վսեմ. Իպրահիմ
պէյէն, 1913 ասորուան Հոկտ.ին, երբ
Սամաթիոյ եկեղեցւոյն գործին վրայ
խօսելու համար երկու քահանաներ գա-
ցած էին իրեն: Ասոր մանրամասնու-
թիւնները յառաջիկայ թիւով:

(Շարունակելի)

Պ Ի Ո Ս Ժ .

(Շար.)

Րիէզէի փոքրիկ կղերիկոսը մինչև. 1852
աւարտելով Ճարտասանութեան երկու տա-
րիները, նոյն տարուան Նոյեմբերին մէջ կը
սկսէր փիլիսոփայութեան դասընթացքը:
Նոյն ժամանակ այս ուսման յատկացուած էին
երկու տարիներ: Սիրով և հաճութեամբ ա-
ւարտելով նաև ունի ընթացքը, 1854/ին կը
մտնէր աստուածաբանութեան քառասուկայ
դասընթացքին: Վերջին տարին, այն է՝
1857-58, ոչ միայն՝ ըստ սովորութեան, մե-
ծաւ ուշով կը հետեւէր աստուածաբանական
բազմաճիւղ ուսմունքին, այլ նաև մասնա-
ւոր ջանքով կը պարապէր Ս. Հայրերու գրու-
թիւններէն ծաղկեփունջ հաւաքածոյ մը
պատրաստելու, Ս. Գրքի և Ս. Հարց այն տա-
րիներէն ի վեր իր ուսմունքներուն գլխաւոր
և սիրելագոյն առարկան կը կաղմէին. ասոր
ճշմարտութեան վերահասու ըլլալու համար
բաւական է ձեռք առնուլ իր եպիսկոպոսա-

կան հովուականներէն մին, կամ նոյն իսկ
Քահանայապետական Շրջաբերականներուն
առաջինը:

Եկեղեցական երգեցողութեան նկատմամբ
իր ունեցած յարումն ու փափաքը և քաջ
ծանօթութիւնը պատճառ եղաւ որ Մեծա-
ւորները այս վերջին տարուան մէջ նոյն եր-
գեցողութեան վարչութիւնը իրեն յանձնեցին:

Աստուածաբանութեան չորրորդ տարին
ալ լմնցաւ փառաւորապէս՝ ինչպէս բոլոր
մէկալները:

Տարիքին համար ինը ամսուան տնօրինու-
մը Հռոմէն անուելով, Յովսէփ Րիէզէյէն
Գոսթէլֆրանգօ դնաց, 18 Սեպտեմբերին,
անոր Մայր Եկեղեցւոյն մէջ քահանայ ձեռ-
նադրուելու համար: Քանի՜ անգամ այս ճամ-
բան քալելով ըրած էր Յովսէփ, երբեմն
նաև բոպիկ ոտքով՝ ընտանիքին ծախքերը
չաւելցնելու համար, Յովսիսի արեւուն,
Յունուարի ձիւնին, մրրկախառն անձրևներ-
բու և փութերու տակ, սորվելու դաստիա-
րակուելու թուռն սէրէն տարուած. և հիմա
իր կեանքին թողձանաց վախճանը, վերջնա-
կէտը կը հասնէր, քահանայանալով բոլորա-
նուէր ընծայուիլ Աստուծոյ: Հասած էր այն
երջանկաւէտ օրը և հասած էր՝ իրբև ամե-
նասիրելի և անձկակարօտ ակնկալուած վար-
ձաորութիւն մը այնքան աշխատանայ: Օրը
խաղաղաւէտ էր և հանդարտ. ձին ի փոյթ
ի գոռթ կ'արշաւէր: Այդ ճամբան յիշուի
բնաւ այսչափ երկար չէր երևցած իրեն, ինչ-
պէս այս առաւօտ, և ոչ իսկ այն ոտնն երբ
հետիոտն կ'երթար անկէ: Երբ զանգակատան
գաղաթը տեսաւ մշուշի մէջէն, տրոփեց սիրան
ի թունդ. և սիրուն մտածումով մը կրկնեց.
Վերջապէս այսօր քահանայ պիտի ըլլամ:

Հետեւեալ օրը, 19 Սեպտեմբեր, Րիէզէի
Ժողովրդապետական եկեղեցին, աղգականաց,
բարեկամաց և ծննդավայրին ամբողջ բնակ-
չութեան ընդհանուր ցնծութիւններուն մէջ,
Յովսէփ Սարթօ նորընծայ քահանայն նուի-
րեց Աստուծոյ իր առջինեկ Պատարաղը:

Թրէվիդոյի Եպիսկոպոսը՝ Արհի. Ֆարինա,
Յովս. Վ. Սարթօն անուանեց մատարնա-
պետ-Ժողովրդապետ Թամպոլոյի, որ Բա-

տուայի գտառութիւն մէկ գիւղին է: Հոն, ուր
սնն ասին 1380 ընտկիչներ կային, գնաց
Սարթօ 1858ի հոկտեմբերին, սկսելու համար
իր եկեղեցականի ընթացքը: Ամբողջ իր ե-
կամուսը՝ հունձքի ժամանակ ցորենի կամ ե-
գիպտացորենի համեռու ժողովարարութեան
մը մէջ կը կայանար: Բայց Սարթօ առոր վը-
րայ չէր խորհեր բնաւ: Անկկայ Թոմպոլօ գնաց
մտքին մէջ շատոնց գծած մասնաւոր ծրու-
պրովը. ուսանել միշտ՝ քարտզելու և խոս-
տովանցնելու համար: Կիւանդաց քով յա-
ճախել և օգնել, աղքատներու ձեռք կար-
կառել ու նպաստել, ագէսները հրահանգել,
և, ի մասնաւորի, քրիստոնէաբար պատմա-
րակել տղաքն ու պատանիները:

Այս ծրագրով յանձն առաւ Յովս. Վ. ք
Թոմպոլօյի մատրանապետութեան պաշտօնը,
և անոր գործադրութեան համար՝ խորհուրդ-
ներովն ու գրգիռներովը մեծապէս օգնեց ի-
րեն՝ իմաստուն, գործօն, ուսեսլ և բարի
անձնաւորութիւն մը, տեղւոյն զիսաւոր ժո-
ղովրդապետը՝ Տ. Անտոն Գոթթանթինի: Հոն,
այս փորձառու և եղբայրասէր վարդապետին
օգնութեամբ, Տ. Սարթօ կատարեց իր քա-
հանայութեան նորրոնձայութիւնը: Երկուքն
ալ միեւնոյն զգացումն ու փափաքն ունէին
աղէկութիւն ընել իրենց ժողովուրդին: Եր-
կուքն ալ սաստիկ կը սիրէին միեւնոյն ուս-
մունքը՝ Ս. Գիրք և Ս. Հարք:

Նորընծայ քահանայն կամաց կաճաց համ-
բաւ չափեցաւ քաջ քարոզախօսի, և մերձա-
կայ խոշոր աւանները իրարու հետ կը մըր-
ցէին իրեն ունկնդիր ըլլալու՝ իրենց եկեղե-
ցիներուն ամպիրոններէն:

Սակայն միայն քարոզութիւնը չէր Տ. Յով-
սէփին ամենածանր գրադմունքը: Մեծ ե-
ռանդով անձնատուր էր նա երիտասարդու-
թեան զատոթարակութեանը, և կանոնաւո-
րապէս դաս կու տար Թոմպոլօյի և մօտա-
կայ գիւղերու մէջ իսկ՝ եկեղեցականութեան
փափաքող տղայոց: Նոյնպէս իր եղբայրա-
րութիւնը շատ նշանաւոր էր. աղքատաց
բաժնած ողորմութիւնները շատ սնդամ իր
համեստ կարողութեան չափը կ'անցնէին:

Երբ 1859ին պատերազմը պայթեցաւ, իր

եղբայրներէն մին զինուորութեան գնաց և
ընտանիքը շատ խեղճութեան մէջ ինկաւ.
արդէն արիասիրտ մայրը՝ աշխատելով հան-
դերձ, ստիպուած էր շատ պարտքեր ընել իր
զաւակները անույնանելու համար: և հողերը
զրաւի զրած էր:

— «Ի՞նչ պիտի ընենք հիմա, այլ ևս բան
մը չունենալով արեւու տակ», հարցուցած
էր ցաւալար մայրը՝ երբ Տ. Յովսէփ այս
պարագաներուն եկած էր հօրենական տունը
այցելելու:

— «Մի՛ անհանգիստ ըլլար, մայրի՛կ, Աս-
տուած պիտի խնամէ», միակ պատասխանը
եղաւ բարեպաշտ նորընծայ քահանային:

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀՈԴԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆԵՐ

„ՆՍԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

ԳԻՐԿ Ա. — Գլ. Ի. Գ. — Մ'անուան մտածութեան վրայ:

(Շար.)

Ո՞վ պիտի յիշէ զից մահուընեղ վերը եւ ո՞վ պի-
տի աղօթք իցի համար:

Ըրէ՛, ըրէ՛ հիմա, ո՞վ ամենասիրելի, ինչ որ կա-
րող ես ընել. որովհետեւ յես գիտեր թէ՛ ե՛րբ պիտի
մեռնիս. յես գիտեր նոյնպէս թէ՛ մահուընեղ վերը
ի՛նչ պիտի ըլլայ վիճակդ:

Միեւրոյն ժամանակ ունիս, համբարէ՛ անմահ
հարստութիւններ:

Փրկութեան զայս բան մի՛ մօտեւ. միայն Աստու-
ծոյ բաներուն մասին հոգ տա՛ր:

Հիմա իցի բարեկամներ վասկի՛, յարգելով Աս-
տուծոյ Սուրբերը, եւ նմանելով անոնց գործերուն. որ-
պէս զի երբ պակսելու ըլլաս այս կեանքին, անոնք
ընդունին զից յաւիտեական յարկերու մէջ:

ՍՈՒՐԻ ԼԵՒՈՆ ՄԵՆՏ, ՔԱՀԱՆԱՅԱԳԵՏ

Այս սուրբ քահանայապետը անհաւատալի ջան-
քեր ըրաւ Նիկիոյ և Քոզկէղոնի ժողովներուն կա-
նոնները պահել տալու համար: Եկեղեցականներուն
պատուին և զգաստութեան մասին շատ հոգ կը տա-
նէր. կ'ուզէր որ անոնք առաքելութեանց տիպար և
կատարելութեան հայելի ըլլան: Ուստի քահանայու-

Թեան և եպիսկոպոսութեան աստիճաններուն կը բարձրացնէր միայն զանոնք որ իրենց բարքով ու վարքով երեւելի հանգիստացած էին: Իր մեղաց թողութեան արժանի ըլլալու համար քառասուն օր աղօթքով ու մտածականով անցուց Ս. Պետրոսի գերեզմանին մօտ որուն առանձին ջերմեռանդութիւն մը ունէր: Այս քառասուն օրուան անցնելէն վերջը սքանչելի Առաքեալը անոր երեւցաւ և բոաւ. Քեզի համար աղօթեցի. մեղքերուդ քողաքիւն տաւեցաւ: Լաւ նալէ քէ որո՛ւց վրայ ձեռք կը դնես. որովհետեւ այս մասին իոյս համար պիտի պանանջուի քեզի:

Իր քահանայապետութեան ժամանակ ամէն տեսակ աղէտներ և թշուառութիւններ տեղի ունեցան. բայց կարծես թէ Աստուած ուզեց այս Սուրբին միջոցաւ դարման տանիլ նոյն չարիքներուն: Աստիճաւ, Հոնաց թագաւորը այն ամբարառան ըստարարորդ, որ պատուհաս Ասուծոյ մակդիրն տուաւ, եւամեայ պաշարումով Աքաւիւր քաղաքին տիրելէ յետոյ, կը յառաջանար Խալիլոյ ներքերը, և ծամբուն վրայ դիմանցը ելածը հռեր և սուրի կը մտնէր և կը ջանար Հռոմի վրայ յարձակում գործել, զայն առնուել կործանել և այդպէսով ամբողջ Խալիլոյ տէր ըլլալ:

Քահանայապետը տեղի ունեցող չարիքներուն վրայ ցաւելով Հռոմէն ելաւ Աստիճաւի առջեւը դընաց մինչեւ այն տեղը ուր Մինչիւյ վատկը Մանգուլի մէջէն անցնելէ յետոյ Բոյ գետը կը թափի: Եւ իր քահանայապետական զգեստները հագած, ի ներկայութեան Հռոմի ամբողջ ծերակուտականներուն, որոնք եկած էին նոյն խուժադուժ աշխարհակալին ոտքը ինչոյն, անոր խօսեցաւ այնքան լրջութեամբ, շարժաւորութեամբ, խոհեմութեամբ և ճարտարաբանութեամբ, որ զանիկայ համոզեց այլեւս յառաջ չերթալու ալլ ստորին Բաննիւս կամ որ նոյնն է Հունգարիա դառնալու: Բարձրորաները երբ հարցուցին Աստիճաւի թէ՛ ինչո՛ւ անգէն ծերի մը հնազանդեցար. անիկայ պատասխանեց թէ՛ Լեւոնի երկու կողմը՝ երկու պատկառազու ծերեր տեսայ որ մերկ սուրբ բռնած էին և կը սպառնային զիս սպաննել եթէ անոր չհնազանդէի: Միշտ այնպէս համարուած է թէ այն երկու յարգելի ծերերն էին Ս. Պետրոս և Պողոս առաքեալները, որ նոյն տանն, այս մեծ քահանայապետին միջոցաւ, պաշտպանեցին Հռոմ քաղաքը որուն հաւատարմութեամբ պահպանեցին և հզօր պաշտպաններն էին:

Քիչ ժամանակ վերջը, Քենսերիկոս, վանապետութեան թագաւորը, Ափրիկէի տիրած ըլլալով, Խալիլոս անցաւ զօրաւոր բանակով մը: Վաղենտինիանոս կայսեր կնոջ Եւդոքսիայի գրգռութեամբ, սպառնալով իսպառ հիմն ի վեր տապալել Հռոմ քաղաքը, Քահանայապետը դիտէր որ Քենսերիկոս արիւնտան հերետիկոս և կաթոլիկէից թշնամի է. անծանօթ չէին իրեն նաեւ այն անգթութիւնները զոր դորժած էր Ափրիկէի եպիսկոպոսներուն և եկեղեցիներուն դէմ: Սակայն և այնպէս բոլորից, բարի հովուի մը պէս, անգամ մը եւս ինչպիսիք վտանգի մէջ գնիլ իր հօտին համար, և

այս խուժադուժին գիմարը երթալով ազալել որ իր ցատուժը իջեցնէ և քաղաքը չկործանէ, անոր եկեղեցիները և նուիրական բաները չպղծէ այլ շատանայ անոր մէջ գտնուած հարստութիւններով: Իր խնդիրքով քաղքին աւարման ժամանակ հրդեհ ու սպանութիւն տեղի չունեցան և երեք զխաւար եկեղեցիներուն գանձերը կողոպտուէ գերծ մնացին:

Երբ այս թագաւորը քաղքէն ելաւ՝ Սուրբ Լեւոն ջանաց գերիները գնելու և թշուառները միթապելու. նորոգել տուաւ նաեւ հանրային այն շէնքերը զոր թշնամիները աւերած էին. և Սպպեան ծամբուն վրայ, Սուրբ Կռաւնիկոս Պապին և Մարտիրոսին պատուին, իր ծախքով եկեղեցի մը շինել տուաւ: Նորոգեց նաեւ Սուրբ-Պետրոսի, Սուրբ-Պողոսի և Սուրբ-Յովհաննէս-Լաւերանու եկեղեցիները, անոնց մէջ չինել տուաւ դմբէթներ, նկարներ և մանրամասէ պատկերներ որ մինչեւ հիմայ կը տեսնուին Սուրբ-Պողոսի եկեղեցւոյ մէջ: Կարգեց մատարանապետներ զորս սեփական տնտեսեց, Առաքելոց գերեզմանները պահպանելու համար: Սուրբ Պետրոսի եկեղեցւոյն մօտ ուրիշ մեծատուն մը հիմնեց. շատ եկեղեցիներու գեղեցիկ անօթներ և ծախ գորգեր տուաւ:

Սուրբ Լեւոն իր ամբողջ կեանքը նուիրեց պահպանելու եկեղեցին՝ հերետիկոսներու հալածանքներէն եւ Խալիլոս՝ Բարբարոսներու արշաւանքներէն: Իր գրութիւններով ծախացուց եկեղեցւոյն գանձը եւ շնորհիւ իր արտաքոյ կարգի տրգիւնքներուն արժանի եղաւ Մեծ մակդիրին: Քառասունէկ տարի քահանայապետութիւն ընելէ ետքը, կնքեց իր բաղձմեայ կեանքը 461, Ապրիլ 41ին: Ձեռնադրած է 84 քահանայ, 31 սարկաւազ և 473 կամ 485 եպիսկոպոս դանդաւան եկեղեցիներու համար: Հռոմ դառնապէս ողբաց իր հզօր պաշտպանին մահը: Քաղկեդոնի ժողովին մէջ 530 եպիսկոպոս իրեն առին մեծ խանդավառութեամբ: Երբազոյն, Աւաբելախան, Ընդիանախան եւ Տիեզերախան Պատրիարք տառապանակ, և խորհրդին Աստուծո՛մ որ զանիկայ ընդ երկար պահէ իր եկեղեցւոյն բարձրին համար: Հաւատքի վրայ գրուած շատ ընտիր նամակներ ունի, որոնք Հռոմի եկեղեցւոյն դիւաններուն մէջ պահուած են: Ունի նաեւ հրաշալի քարտիներ և ներքողներ:

ՀՌՈՍԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՅՈՐԴՈՒԹՅԱՆ ՕՐԷՆԻՔԸ

(Շար.)

Այս ամէն զգուշութիւնները, կրցած չեն, դարերու ընթացքին մէջ, արդիւիւ շատ մը ոտնձգութիւններ, զեղծումներ և աղէտներ: Պատմութիւնը արձանագրած է զանոնք. մենք հոս զանոնք մանրամասնօրէն յիշելու միտք

չունինք։ Այս մասին միտն անոնք կրնան
զարմանալ որոնք կ'անգիտանան թէ ուժ-
գնօրէն զինուած, ընդդիմադիր ուժերու
մարդկային քաղաքականութեան ինչ մեծ
շահեր կը ձգտէին պապընտիր ժողովներու
մէջ գերիվերոյ հանդիսանալու։ Հոն համա-
խառն կը գիտէին, ամբողջ քրիստոնէու-
թենէն, և ա'յնքան ուղղակի որքան Եկե-
ղեցոյ և Պետութեան միջեւ անձուկ էր յա-
րաբերութիւնը, Տէրութեանց մերթ մեղմելի
մերթ յանդուգն դիւանադիտութեան վերջին
ձիգերը, որոնք շատ քիչ անգամ շահադի-
տութենէ աղատ ըլլալով, երբեմն յաջո-
ղութիւն կ'ունենային։ Բայց զարմանալի
է որ աւելի և աւելի յաճախ նոյնը չէր
պատահեր։ Ամէն պարագայի մէջ, հիաց-
ման արժանի է այն խոհեմ և աւանդութեան
հաւատարիմ ոգին, զոր Քահանայապետները
ցոյց տուին հետզհետէ այս ամբողջ օրէնա-
դրութիւնը հաստատելով։ Իրենք այս նիւ-
թին մէջ աւելի իշխանութիւն ունէին քան
ժառանգական վեհապետները, որ հասարա-
կօրէն չեն կրնար յաջորդութեան կարգը փո-
խել։ Իրենք, ընդհակառակն սնոր պայման-
ները գերիշխանօրէն կը կանոնաւորէին։ Այս
իշխանութեան ընդարձակութեան մէջ իսկ
վտանգ մը կրնար ըլլալ։ Մոնղէսքիէօ գիտել
տուած չէ՞ արդէն թէ այն տէրութեանց
մէջ, ուր Վեհապետին իշխանութիւնը սահ-
մանափակուած չէ, ինչպէս էր հին Քրիս-
տոյի մէջ, հիմնական օրէնքներով, և ուր
յաջորդութեան կարգն իսկ անոր կամքէն
կախում ունի, ընդհանրապէս խառնութիւն-
ներ սնուակաւ կ'ըլլան իշխանութեան փո-
փոխմանց ժամանակ։ Եկեղեցւոյ մէջ այս-
պէս չեղաւ։ Քահանայապետական օրէնա-
դրութիւնը այս մասին այնքան հաստատուն
և ապահով կերպով ընդլայնուեցաւ, ճոխա-
ցաւ որ հիմնական, անձեռնմխելի օրէնքներ
աւելի երաշխիք չպիտի կարենային ընծայել։
Անշուշտ բարձրագոյն քահանայապետութեան
համար զահակութիւնը և երբեմն իսկ հեր-
ձուածներ տեղի ունեցեր են, սակայն եթէ
նկատի տանուի մարդկային ակարութիւնը,
հարկ կ'ըլլայ խոստովանիլ թէ ամբողջին ար-

դիւնքը դարձեալ հիանալի է։ Բայց արդէն
ամէն միջոցներ, որչափ ալ գերազանց ըլ-
լան, թերի կողմ մը կ'ունենան։ Փառանգա-
կանութիւնն իսկ չէ կրցած շատ անգամ ո'չ
իշխանութեան փոխանցումը դիւրացնել, ո'չ
մեքենայութեանց և զահակութիւններու առջեւ
աւանդել, ոչ ալ օտարը հեռու կեցնել։ Ակնարկ
մը ձգեցէք պատմութեան վրայ, պիտի տես-
նէք որ յաջորդութեան կռիւներէ զերծ մնա-
ցած միապետութիւն մը չէ եղած։ Շատ ա-
տենէ ի վեր նմանօրինակ անկարգութիւն մը
երբեք չէ պատահած։ Կաթողիկէ Եկեղեցւոյ
մէջ, Զայո կը հաստատէ Թէն, գիտել տա-
լով թէ, այս մասին ևս, քահանայապետու-
թիւնը գերիվերոյ է Հռոմէական կայսրու-
թենէն, որ ըստ իրեն անոր օրինակն է եղեր։
«Հոգ տարուած ե, կ'ըսէ, քարճագոյն իշխա-
նութեան փոխանցման հին Հռոմի մէջ կրցած
չէին զայն կարգադրել, անոր հաւատ, արողի
պարագրքեան ժառանգի, տեղի կ'ունենային
այնքան խիստ զահակութիւն, և բուն ուժի
ամեն ընդհարումները, վայրագութիւնները,
յայտնաբերութիւնները, և անիշխանութեան բո-
լոր աղետները։ Կաթողիկէ Հռոմի մէջ, քա-
րճագոյն Քահանայապետին ընտրութիւնը վերջ-
նապէս կ'իյնայ քարճաւստիան եկեղեցականե-
րու ժողովի մը, որ հաստատուած օրէնքներու
համեմատ քահանայութիւն կը կատարեն, երկու
երրորդ մեծամասնութեանք ևնր քահանայապե-
տը կ'անուանեն։ Եւ չորս դարէ ի վեր այս
ընտրութիւններէն և ոչ մին վեհի առաջիկայ
եղած է։ ամեն հանգուցեալ Պապ իր ընտրեալ
յաջորդին անմիջապէս փոխանցուած է իրեղե-
րական հնազանդութիւնը, առանց դեղեւանի,
և եկեղեցւոյ մէջ ուրիշ հերձուած եղած չէ
ոչ ընտրութեան առաջ և ոչ ալ ընտրութեան
վերջը»։

Կը մնայ զահի պարագրքեան սնտեղու-
թիւնը, ըստ ինքեան, զոր ընտրական դրու-
թեան մէջ անկարելի է ջնջել։ սնտեղու-
թիւն իրական, մանաւանդ երբ ամիսներով
երկարաձգուի ինչպէս պատահած է երբեմն,
նոյն իսկ պապընտիր ժողովներուն հաստա-
տումէն վերջը։ Ասոր զարման տարուած է,
կարելի եղածին չափ, կարդինալները չուտ

գործելու ստիպելով՝ անոնց վրայ դրուած խստակեցութեան պայմանով: Վերջին անգամ Պիոս Ժ. պապնտիր ժողովի ամբողջ օրէնսդրութիւնը ամիոփեց Vacante sede (25 Սեպտ. 1904) սահմանադրութեամբ, որ կը ջնջէ բոլոր նախնթաց օրէնքները. և այս բարենորոգութեան մէջ, կը սեանուի թէ ջանացեր է զանազան գործառնութիւններու դժուարութիւնները թեթեւցնելու և յապաղումի պատճառները բառնալու: Բայց ինչ որ ալ ըլլուի, միշտ ժամանակ մը պիտի անցնի քահանայապետին մահուան և անոր յաջորդին անուանման միջեւ: Ժառանգականութենէ դուրս, այլազգ չի կրնար ըլլալ. և ճիշդը ըսելով, ասոր մէջ գոնուած թերութիւնը առաւելապէս փոխարինուած է բացակայութեամբ անչափահասութեանց և խռովութեանց որ առհասարակ առաջիններուն հետեւանքն են, ինչպէս նաեւ սա ստուգութեամբ որ երիտասարդ վեհապետի մը անփորձութեամբը դէպի անգունդ տարուելու վտանգ պիտի չըլլայ:

Եւ ա՛յս է ընտրական վարչութեան ներքին առաւելութիւնը, տեսականօրէն այնքան ակներեւ, որ չուտով անհետ կ'ըլլայ սակայն գործնականօրէն երբ կարեւոր զգուշութիւններով չպահպանուի: Ժառանգականութեան զիմելը՝ ծննդեան պատահականութեանց մատնուիլ է. եթէ ընդհակառակն ազատ ընտրութեան զիմուի, կարելի կ'ըլլայ ամենէն արժանաւորը պաշտօնի կոչել: Միայն թէ երբ զգոյշ չկեցուի, զիւրաւ բոլորովին տարբեր նպատակով մը իրարու կը զաշնակցին շահեր, և այն ատեն, անոնք որ գործին մէջ չեն, կը զարմանան տեսնելով ընտրութիւններու շարքեր, որոնց մէջ կարծես խօսքը մէկ ըրած են մերժելու խաղառ այնպիսիները որ իրենց անձնական արժանիքովը քիչ մը հեղինակութիւն կրնային ունենալ:

Սուրբ Ժողովին մէջ այսպէս չէր կրնար ըլլալ. կարգինալները երդում կ'ընեն քուէնին ամենէն արժանաւորին տալու, և իրենց բարձր իմաստութեամբը կրնան ալ զայն գտնել: Իրօք ալ, դժուար է գտնել ուրիշ ոեւէ հարստութեան (dynastie) մէջ.

բարձրագոյն Քահանայապետներուն հետ համեմատուելու արժանի նշանաւոր մարդոց շարք մը: Ասկէ զատ կարգինալները բոլորովին ազատ են տալու իրենց քուէները անոր որ պատշաճ կը համարին. սեղմում երբէք չկայ. ամէն կաթողիկէ ընտրելի է. բայց, իրօք, գրեթէ միշտ իրենց մէջէն կ'ընտրեն: Ի՞նչ սքանչելի պայմաններ, աւանդութեան շարունակութեան համար Եկեղեցին չուզեց ժառանգականութիւնը որ իրեն չի յարմարիր. և սոհմամոլութեան (nepotisme) վրտանդէն իսպառ զերծ մնալու համար չուզեց նաեւ որ Պապը կարենայ իր յաջորդը ընտրել: Բայց, քիչ մը անուղղակի ճամբով, հաւասարապէս կ'ապահովէ պէտք եղած հաստատուն կացութիւնը: Այն անուանումը զոր պապը սոհձամբ չ'ընէր, իր մահէն վերջը կը կատարէ իր կազմած գերդաստանը, և հասարակօրէն, ընտանեկան անդամներուն մէջէն: Այս պայմաններով, առանց դժուարութեան կը հասկցուի թէ Եկեղեցւոյ կառավարութիւնը ուէ ժառանգական միապետութեան մէջ նախանձելու բան մը չունի:

Այս շարունակութիւնը ապահովուած է նաեւ ամէն կաթողիկէ քահանաներու պարտադրուած կրթութեամբ, որմէ կարգինալներն ալ, այլոց պէս, անցած ըլլալու են: Հիանալի են, արդարեւ, պատմութեան մէջ ազնուական դասակարգերը, հին Հռոմի և նոր Անգլիոյ, որ պահեր են մեծ ժողովուրդի մը աւանդութիւնները, և կրցեր են իրենց անդամները ընել ազգային պետեր, անոնց սորվեցնելով հայրենիքի մնայուն շահը իրրեւ իրենցը նկատել: Յայտնի է թէ, այսպիսի արդիւնքի մը հասնելու համար արեւան փոխանցումը չէր բաւեր. ամէն բանէ առաջ պէտք էր պարտուպատշաճ կրթութիւն մը որ անցեալին նկատմամբ պատկառանք ազդէր, ամբոխէն բաժնէր զանոնք որ ապա անոր պիտի իշխէին, և միանգամայն անոնց խորհուրդները ուղղէին դէպի հասարակաց ծառայութիւն: Կարելի է չտեսնել թէ, աւելի բարձր չըջանակի մը մէջ, այս կերպով կազմուած է Կաթողիկէ կղերը: Սրեան փոխանցումը արտաքուստ է անոր մէջէն:

բայց ուրիշ ո՛ւր անդ, սերունդէ սերունդ գաղափարներու և զգացումներու փոխանցումը, աւելի լաւ կերպով իրականացուած է: Ուրիշ ո՛ւր անդ անոնց որ սահմանուած են ուրիշները կառավարելու, ապահովուած է թէ պարտ ու պատշաճ մեկուսացում մը թէ հաստատ գաղափարականը հանրային ծառայութեան նուիրուելու, հասարակութեան շահէն ուրիշ շահ չունենալու: Անոնք որ այսպիսի մարմնոյ մը մէջէն պիտի ընտրուին, առանց տարակոյսի, Եկեղեցին, ըստ իր աւանդութեանց կառավարելու, կազմ և պատրաստ պիտի գտնուին: և ահա այս առ-սակէտով ևս մեր ընտրական պետը ճոխացած է ժառանգականութեան մէկ ամենէն չքնաղ առաւելութեամբը:

Այս շարունակութիւնը, ուրիշ կողմէ, պէտք կ'ա՛յ արդեօք ըսելու, ամէն փոփոխում չարգիլել: Ո և է վարչկային ընկերութեան մէջ ո և է վարչութիւն չի կրնար բացարձակապէս անփոփոխ ուղղութիւն մը ապահովել: Այն յեղաշրջութիւնները, որ ժողովրդական վարչութեանց մէջ կուսակցութեան մը յաղթութեամբ կը պատահին, միապետութեանց մէջ տեղի կ'ունենան վեհապետներու փոփոխմամբ: Նոյն բանը կ'ըլլայ նաև Եկեղեցւոյ մէջ իոկ, ուր աւանդութեան շարունակութիւնը լոկ հաստատութիւններու մէկ խաղին արդիւնքը չէ այլ արդիւնք է Աստուծոյ խոստումներուն: Ամէն քահանայապետ, անփոփոխ վարդապետութիւնները պաշտպանելով, միեւնոյն նըպատակը հետապնդելով հանդերձ, ունի իր յատուկ գործելակերպը. և մեր երկրաւոր պայմաններուն մէջ այսպէս ըլլալը լաւ է: անոնք իրարու գործերը թէ կը շարունակեն և թէ կը կատարելագործեն:

(Շարունակելի)

ՖԱՐՄԱՍՕՆՈՒԹԻՒՆԸ ¹

Դ. Լ. ՈՒՆ Ա.

(Շար.)

18. Բայց, եթէ գտնուին այնպիսի հրէշային ծնողքներ, որոնք կրօնական ճշ-

(1) Ցես թիւ 465, էջ 600:

մարտութեանց չհաւատալէն զատ՝ չուզենան նաև կրօնական ու բարոյական կրթութիւն տալ իրենց զաւակներուն և ուզենան որ իրենց որդիքն ալ իրենց պէս անհաւատ ըլլան, այն ստեղծ կ'ըսենք այդպիսիներուն թէ՝ բնաւ երբեք իրաւունք չունին զրկելու իրենց զաւակները այնպիսի բարիքներէ և օգուտներէ զորս կը մատակարարէ ողջամիտ բարոյալից դաստիարակութիւնը. մինչդեռ զանոնք անտեսելով, զաւակները կը մատնուին չէզոք և ամուլ դաստիարակութեան մը:

Այս մասին ըսելու և գրելու շատ բան կայ, սակայն բաւական կը սեպենք դիտել տալը թէ՝ օրհնեալ է Աստուած, մինք Բրիտտոնեայ ենք, մանաւանդ Կաթողիկէ ենք. հետեւաբար արդար իրաւունքնիս է պահանջելն առանց բացառութեան որ՝ մեր զարոցներուն մէջ պէտք է սորվեցնել կրօնալից ու բարոյալից դաստիարակութեամբ և կրթել մեր զաւակները Աստուծոյ և Եկեղեցւոյ օրինաց համաձայն, և բնաւ երբեք չզիջանիլ բացառիկ, անստորբեր, անկրօն կամ անհաւատ անհատներու քմահաճոյից, և չգոհել մեր իրաւունքներն ու զաւակները այնպիսի ստորօրինակ անձանց անիրաւ և ամբարիշտ պահանջկոտութեանց ու ցնորքներուն. ապա թէ ոչ՝ պիտի նկատուինք իբր որբապիղծներ խիղճերու և վատ մատնիչներ արդար իրաւանց և ազատութեան՝ մեր զաւակաց հանդէպ:

Արդ՝ ո՛րքան մեղադրելի և անտեղի է այն ընթացքը շատերուն՝ որոնք իբր խոհեմութիւն կը նկատեն լռելն՝ երբ պէտք է խօսիլ, չսորվեցնելն պարզապէս ճշմարտութիւնն առանց բռնադատելու՝ երբ հարկ է ըստ խղճի զայն բացատրել առանց մարդկային նկատմունքի, նոյնքան աններելի յանցանք և ոճիր է այժմեան ապերաւանակ անտարբեր, անկրօն դաստիարակութիւնն համազգայնոց վարժարանաց մէջ, որուն հետեւանօք ծնողաց դանդաղներու տեղատարաին պայթեցաւ և ստիպեց իրենց Պատրիարքարանը ձայն բարձրացնելու առանձին շրջաբերականով մը. բայց չա՛տ և չա՛տ ո՛ւշ. քանզի համազգային մանկտոնի

մեծամասնութեան մատաղ և անմեղ սրտերն ու մտքերն արդէն խամրեցան այն տեսակ յոռի դատարարականութեամբ որ չի չիկնիր ինքզինքը լուսաւորեալ դարու Հայ վերազարթնումի և զարգացման անդրանիկ շարժումն հռչակելու և ինքնագիտակցութեան ծայրաստիճան բարձրացումն ցուցադրելու :

Յաւիտենական իմաստութիւնն արդէն իր վճիռն արձակած է . Սիլվըն խնաստաքեան երկիւղ Տեսուն . այս երկիւղն ալ չունեցող գիտութիւնը կը հպարտացնէ :

Յօդուած Զ. — Ծարմաստեղիւսն երջանկութիւնը

19. Ծարմաստեղութիւնը մեծամեծ օգուտներ ու շահեր կը խոստանայ վերոյիշեալ տարօրինակ ու անկրօն դատարարականութեամբ զաւակներ կրթող ծնողաց . և հրճուելով կը խայտաճ ու կը բերկրի երազելով թէ՛ օր մը պիտի կարենայ իր յաղթական երգը երգել նիւթապաշտութիւնն՝ կրօնքի աւերակաց վրայ , ինչպէս որ ներկայիս կ'երգէ խեղճ հայութիւնն Անի քաղաքի աւերակներուն վրայ : Այն ատեն՝ մարդն պիտի յառաջանայ յառաջդիմութեան շաղկին մէջ առանց Աստուծոյ երկիւղին արգելքներուն , և պիտի վայելէ այս աշխարհիս վրայ այն բարիքները զորս շատեր կը փնտռեն հանդերձեալ աշխարհին մէջ (կ'ըսէ) :

20. Ուրեմն քննենք և տեսնենք , երկրաւոր երջանկութեան ի՞նչ առաւելութիւն կրնայ ա՛րդեօք չահիլ մարդս մասնական գրութեամբ ու անոր գործադրութեամբ և Աստուծոյ վրայ ունեցած հաւատքը և յոյսը , հանդերձեալ կեանքի ակնկալութիւնը կորսնցնելով :

Ժամանակաւոր բարեկեցիկ վիճակը ձեռք բերելու համար երեք բան պէտք է . 1. Ծանշնալ բնութեան ոյժերը , և զանոնք օգտակար կերպով գործածելուն կերպը գիտնալ . 2. Զանոնք գործադրել՝ այսինքն աշխատելու բարի կամք ունենալ . 3. Յառաջ բերած ու վաստկած հարստութիւնը խոհեմութեամբ և լաւ գործածել , Արդ՝ կրօնքը բնաւ երբեք չ'արգիլէր՝ ոչ ուսմունքը , ոչ աշխատանքը , ոչ զբաղումը և ոչ ալ համեստօրէն ձեռք

բերուած միջոցներու գործածութիւնը , այլ ընդհակառակը աղբու կերպով զանոնք յառաջ տանելու կը ջանայ ու կը յորդորէ :

Կրօնքը բնաւ չ'արգիլուր 1. Բնութեան ուսմունքը . վասն զի , զայն կը հաստատէ՝ անկէ առիթ կը քաղէ՝ ամէն բան ստեղծող Աստուածը փառաբանելու և անոր անուանման իմաստութեանը , ամենակարող զօրութեանը և մանաւանդ մեղի նկատմամբ ունեցած անհուն բարութեանը վրայ սքանչանալու համար . նոյնպէս ալ մարդկային թշուառութիւնները ամօքելու օգտակար միջոցներ կը հայթայթէ : Եւ բնական ուժերու համար ըսածնիս՝ պէտք է ըմբռնել բարոյական միջոցներուն ալ . զոր օրինակ , ընկերակցութեանց , հարստութիւններ , յաջողութիւններ ազդուօրէն ձեռք բերելու և արդարութեամբ ու համեմատական հաւասարութեամբ ամէն ինչ բաշխելու յաջողութեան համար :

2. Աշխատատիրութեան նկատմամբ , Կաթողիկէ կրօնքը կը պարտադրէ գործունէութիւնը , չէ թէ միշտակ գոհացում տալու և բնական պիտոյքները հոգալու համար , հապա նաեւ բարոյական տեսակէտով՝ որպէս զի կարենայ զերծ պահել ամբողջ մարդը ո և է ապականութենէ , Բայց մարդավայել աշխատանք կ'ուզէ ոչ թէ անաւանայատուկ , այսինքն , այնպիսի աշխատանք մը որ չի ջլատէ մարմնաւոր և հոգեկան ուժերը , և թէ կորով ու միջոց տայ հոգեշահ խորհրդածութիւններ ալ ընելու :

3. Հարստութիւնները լաւ գործածելու եղանակի մասին , Կաթողիկէ սուրբ կրօնքը զմեզ ազանութենէն հեռի կը պահէ , ինչպէս նաեւ շռայլութենէն և ծայրայեղ վայելքի ըղձականութենէն : Զմեզ պահեցողութեան յորդորելով՝ քաջողութիւն , երկայնակեցութիւն , խնայողութիւն կը պարգեւէ մեզ , և հետեւաբար մոլագային ամենամեծ ապահովութիւն կը խոստանայ ու կը ճարէ : Ոչ միայն կեանքի պահպանութեան համար . կարեւոր եղած բաները , այլ նաեւ ընտանեկան բարեկեցիկ վիճակ մը ունենալու հոգատարութիւնը կը պատուիրէ . ասկէ զատ մանաւանդ ամէն բանէն աւելի եղբայրսիրութիւնը

կ'ապսպրէ մասամբ իբրեւ հրաման և մասամբ իբրեւ խրատ :

Պատմութիւնը անուրանալի փաստերով կ'ապացուցանէ թէ քրիստոնէական կրօնքի ազգեցութեամբ ու և է ջանք չէ խնայուած և ամէն տեսակ միջոցներ ու հնարքներ գործածուած են կարօտեալներն ու վշտակիրները սփոփելու համար . բազմաթիւ հաստատութիւններ կազմակերպուած են դարերու պահանջմանց համաձայն բնական և բարոյական պիտոյքներն հոգալու նպատակաւ . մասնաւոր կերպով բարեկործական հաստատութիւններ՝ ժողովրդեան կրթութեան , վտանգի մէջ գտնուողներու պահպանութեան , և ինկողներու վերականգնումին համար :

Նըղայրսիութեան և գթութեան գերբնական շարժառիթը՝ զոր Տէրն մեր աղքատին վրայ պատկերացնելով մեզ կը ներկայացնէ և իր անուամբը տրուած զաւաթ մը ջուրին մեծարժէք գնահատութիւն կ'ընէ , այնքան ազգեցիկ է որ զմեզ բարեգործութիւն ընելու կը խրախուսէ , և ի զուր կը փնտռուի ուրիշ ու և է շարժառիթի մէջ այս վեհ հոգին : Ուրեմն սուրբ հաւատքը , ոչ միայն չի հակառակիր աշխարհիս վրայ մեր բարեկեցիկ վիճակ մ'ունենալուն , հապա նաեւ ընդհակառակն մեծապէս կը քաջալերէ զայն :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՍ Հետոյ մէջ սուրբ մահուամբ կնքեց իր 49 ամեայ կեանքը Մարէնկոյ ձուղէքէ քահանան , անդամ Ս . Յովսեփի բարեպաշտական ընկերութեան , բազմարդիւն առաքեալ երիտասարդութեան :

Բիւրաւոր երիտասարդներ իրեն շնորհիւ ընդունեցան և մշակեցին իրենց սրտին մէջ փրկութեան և յարատեւութեան բարի սերմերը , և եղան անոր օժանդակութեամբն ու առաջնորդութեամբը ջերմեանդ քրիստոնեաներ և ընտանեաց բարի հայրեր , շատերն ալ եւանդուն քահանաներ և սրբակեաց կրօնաւորներ :

Երջանկայիշատակ Պիոս Ժ . Բահանայա-

պետը , երբ Վենետիկի Պատրիարք էր , և աւելի մօտէն կրնար ճանչնալ Հայր Մարէնկոյի գերազանցօրէն բարեգործական ձեռնարկը , սովոր էր ջերմագին սէր և գնահատում ցոյց տալ անոր , և հիանալի կերպով ձեռնառու ըլլալ անոր այն բազմադիմի նեղութեանց մէջ , որոնց ենթարկուեցաւ : Պիոս Ժ . երբ Բահանայապետ եղաւ՝ չմոռցաւ իր Հայր ձուղէքէն , շատ անգամ սիրալիւր կերպով զանիկայ ունկնդրութեան ընդունեցաւ , և շարունակեց ըլլալ անոր և անոր պաշտպանարանին (patronage) օգնական , խորհրդական և առատաձեռն բարերար :

Երիտասարդութեան այս անձնանուէր , եւ ընտիր առաքեալը հեռացաւ աշխարհէ , բայց թողուց իր բարի օրինակները և իր յիշատակը , որ միշտ կենդանի պիտի մնայ այն բազմաթիւ հոգիներուն մէջ , որոնք իր շնորհիւ դարձի եկան և փրկուեցան :

ԼՐԱԳԻՐՆԵՐԸ մեծ գովեստով ծանուցին վերջերս վոեմ արարքը Փրանսացի զօրավար արիասիրտ Գասթէլնոյի , որ պատերազմի միջոցին երբ լսեց իր որդւոյն մահը , առանց այլայլելու ըսաւ իր սպաներուն . «Բարեկամներ , շարունակե՛նք մեր գործը» : Նմանօրինակ զէպք մը կը պատմուի նաեւ ռուս զօրավարի մը մասին : Բուռն ընդհարման մը միջոցին յանկարծ յառաջապահ ձիաւոր մը կը մօտենայ զօրավարին եւ կ'ըսէ . «Ձեր որդին մոռաւ» : Զօրավարը այս շանթահարիչ խօսքէն չ'ընկճիր բնաւ , այլ անխռով զէմքով ձին կ'ուղղէ որդւոյն ինկած տեղը . ձիէն կ'իջնէ , համտոյր մը կու տայ անչնչացած որդւոյն , բթամատովը խաչ մը կը դրոշմէ անոր ճակտին վրայ , եւ նորէն ձին հեծնելով կը շարունակէ կռուիլ :

ՊՍԵՐԱՋՄԻ ՈՐԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ .— Շիքափօ բնակող ամերիկեան մարգտտէր մը դեցիկ գաղափարը ունեցիր է նպաստահաւաքութիւն մը կազմակերպելու համերոպական պատերազմին հետեւանօք որք մնացած պըղտիկներուն համար : Սաղաղութեան բարիքները վայելող ամերիկացի աղաք Մ'նունդի տօնին առթիւ նուէրներ պիտի ղրկեն ներ-

կայ պատերազմին մէջ իրենց հայրիկները կորսնցնող եւրոպացի իրենց եղբայրիկներուն: Այս նպատակին համար արդէն իսկ բացուեց է հանգանակութիւն մը, որուն արդիւնքովը և տիկիներէ կազմուած յանձնաժողովի մը հսկողութեան տակ փոքրիկ Ամերիկացիք իրենց փափաքած նուէրները պիտի գնեն: Ամերիկեան դրօշին պաշտպանութեան տակ նաւարկող յառակ շողիկներ մը այս նուէրները Եւրոպա պիտի տան:

ԲԱՆԱԿԻՆ ՄԷՋ պաշտօնավարող քահանայ մը հետեւեալ տեղեկութիւնները կը հաշորդէ.

Այս հնոցին մէջ ո՛րքան գեղեցիկ է փահաւային դերը: Թրակաւի կայսրաններուն մէջ արդեւ արձակուել տուի հարիւրաւորներու որոնք կը մեռնէին իրենցիկներէն հեռու: Զաւաւի, որչափ որ կըցայ, անոնց արցունքը ցաւփեցնելու եւ անոնց ընդհանարեղ տալու երկինքը: Մարդ կ'ընկերակցէր տեսնելու անոնցի ցաւեր, տակաւի վերէն. ապա զարմացաւ անոնց կ'ընէ մօր պէս գործիք ըլլալու: Ի՞նչ մեծութեան զանգեցնէր, ի՞նչ արտայայտ յիշատակներ:

Երեկ չէ առջի օր, զիւղ մը հասանք, ուր կոխը սարսափելի եղած էր: Հարիւրաւոր վիրաւորներ դիզուած էին անբարանցներու մէջ... անկարելի է ներս մտնել. մութ գիշեր է. մի փակի խօսք կ'ուղղուէ այս թշուառներուն, փահաւայ ըլլալ իրենց հասկնելու համար: Եւստիք արագեղումով շնորհակալ կ'ըղան ինծի: Իրենց կը խօսիս Աստուծոյ վրայ որ զիրենք կը պիտի, որ նկատի կ'առնու իրենց ցաւերը, որ ինք ալ ցաւեր կ'ըսէր է իրենց մեղքերուն համար. եւ ընդհանուր արձակուել մը կու տայ թշուառներուն: Անբարանցի մը մտքին առջեւ՝ վիրաւոր մը պատկած է. ձեռքս կը սեղմուէ արեւ գեղումով. նշան կ'ընէ թէ կ'ուզէր գրել. եւ իր դողդոջուն ձեռքով, յուշատետրս վրայ, արեւի ցայտիկներու միջեւ, կը գրէ սա արտաբան խօսքեր, որ ինծի համար, այն աղետալի գիշերուան բարեպաշտի մէկ յիշատակն է. «Ներողութիւն՝ եղիք. չեմ կրնար խօսիլ... իմ ցաւերս Թիւրքի եւ Մարիաւու ցաւերուն կը միացնեն...: Երբեք չի կրնար խօսիլ: Ահ, զիս մի՛

մոռնալ»: Վսեմ է այս. այնպէս չէ՞: Ահա՛, այս միջնորդութիւն մէջ կ'անըցնեմ կիսաւրիս ամենէն ախուր բայց ամենէն կազդուրիչ ծաւերը:

ՇՈՒՆԻ ՄԸ ԲԱՋԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ. — Բարիդէն Սեպտ. 30 թիւով կը գրուի անգլիական թերթի մը. «Իր ընտանիքին ուղղած նամակին մէջ, Թրակաւի գլխավոր մը, որ Մառնի մէջ կը ծառայէր, կը պատմէ թէ ի՞նչպէս իրենց զօրագունդին շուրջ ազատեց զինքը Մառնի ճակատամարտին մէջ: Թեւ Վիրաւորուած էր ուղեւորի կտորէ մը, կզակին մէջ գնդակ մը մտած էր եւ զլիւին վրայ ստացած էր սուրի հարուած մը: Զինուորը ռազմադաշտին վրայ ինկած էր իր մեծած ընկերներուն տակ կիսովին ծածկուած: Յանկարծ դէմքին վրայ փայփայանք մը զգաց: Զօրագունդին շուրջ էր որ վիրաւորները փնտռելու պաշտօն ունէր: «Գնա՛» և ընկերներուն խնայուր», աղաղակեց զինուորը: Եունը հասկըցաւ և վազելով գնաց ու երկու հոգի բերաւ, որոնք պատգարակի վրայ գրին վիրաւորը ու տարին: Եունը շատ ճարպիկ է այս տեսակ դործերու մէջ: Ամէն օր կանոնաւորապէս ռազմադաշտ կ'երթայ ու երբ կրակը շատ բուռն ըլլայ, ծակ մը բանալով անոր մէջ կը պահուրի:

ԳԱՅՈՒՆԻ ՄԷՋԶԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ(*)

(Տեղամի)

2. Պիլաքս, հոյսմ իսկ հեր շէյ պիտի տէմէք հէր ախլիլ ֆիքրի վազիֆէ ու ֆազիլէթի վէ էսասը մէզէպիլէյի քիւլիլէյն զիյր ու զէպէր իսէր: Չիւնքի չայէտ պու էօմրտէն սօնրա իւմիտ իտէճէք վէ էախօտ գօրգաճաք պիլ շէյ էօք իսէ, պազէն օ գաւապ աղըր վէ զանմէթլի օլան իսայլըն, վազիֆէնին վէ մէզէպիլն իճրայի ահքեմալնա էօրուլմաղա նէ՛ մէզպուրիլէթիմիլ վար: Արթըր օ թագաւորաէ, խայր իլէ շէրր, մէհապիլն իլէ մէսսովիլ ահվալ, իսմի մէվճուա

(*) Տե՛ս թիւ 467, էջ 636:

Ֆազաթ ճիսմի նա մէջնուտ էլհամ հալինտէ գալմա՞ղ մը :

Փազիլէթ, ասնապընա աղըր զանմէթլէրէ մալ օլուր, հալպու քի ֆըսգ ու ֆիւճուր իսէ տիւշկիւն թապիւթընդա բէք մուվաֆըք կէլիր: Շու հալտէ, շայէտ մէջնուտիյէթիմիլդ հալընդդ պու աիւնհայա մընհասըր իսէ, ֆազիլէթ տէ սասսէքի եպէսիյէ մէյվիյէրի հուսուլա կէթիրմէյէճէք վէ ֆէնալըդ, պիր տարը աիւրէթատ, քեսէքիլի գալպու իրմէգ պիր սուրէքսէ ճէգա կէօրմէյէճէքսէ, ֆազիլէթլին զանմէթլի եօլունասան եիւրիւմէք վէ ֆէնալըգաւան թէվալըգը իթմէք խուսուսընտա պին պիր տիւրլիւ ֆէտաքիարըղլար իթիյէթիյէրէյէլէմէք ատէթա պիր համագաթ տըր: Պու պէօյլէ օլուրը կիպի, արթըգ ֆազիլէթին, մէզնէպին, այիլէնին վի ճէմիյէթի պէշէրիյէնին էսապըրը միւնհէտիւմ օլուր: Վէ հօլլաւ իյէ հէր շէյ պիթէր գազիյէթի մօղրու օլաճագ օլուրսա, տիւնհա՝ թուֆանը ճինսաթ իլէ թուղեսան իսէր: Արթըգ սիրգաթ, գաթլ վէ հէվայի նէֆասնիյէնին ինթաճ էյլէտիյի հէր տիւրլիւ էֆալը մէզմումէ թէամ միւմ իսէր, չուքի մահպէտլէրտէն վէ ինզըպաթ մէմուրլարընըն էլինաէն սէ գալմագ չօգ տէֆա դասիլ օլուրօր:

«Ալլահա, բուհա հայաթը ուխրէվիյէյէ իման իթմէյէն պիր ճէմիյէթ, աստալէթէ, աստալ ու ախլէգա բիայէթ իսէմէլ: Փիլ հազիգա տա, շայէտ մէջնուտիյէթի ինսանիյէնին ճէվէլանկեսը հալընդդ պու տիւնհա իսէ, արթըգ ինսանըն պաշը իւզէրինտէ հիւքիւմէթէ, իւպալա վէ սայիրէյէ նէ՞ լիւզում վար տըր: Արթըգ իթաթ, ֆապր ու սէֆալէթ վէ միհէն ու մէշագգաթ մանալըգ գալմաղլար մը: Էյէր հայաթը ուխրէվիյէ պիր խայալսան իպարէթ իսէ, ինսան քէնտի մէմնունիյէթինի վէ սաստէթինի պու աիւնհաստա սորամսգտա հալըլը օլմա՞ղ մը: Շուրը պուլամսյաճագ օլուրսա, էէպլէն, միւսէլլաճէն, իթիլլալ թարիլիլէ ծնարա աէսթըն օլմաղա հալըլը օլմա՞ղ մը: Պու սուրէթլէ տէ միւվէֆֆագ օլմայուլ տա հէն ու նէվմիտիսի ուայիպսըլլա, քէնտինճէ եէկեսնէ վասիթայի նէճաթ օլան ինթիւրա միւրաճաթ

իսէրսէ, քիմսէ ծնը մուսխաղա՝ իսէմէլ»:

«Իշթէ կէօրիլիյէթի հա, կէլէճէք պիր էօմրէ օլան իթիգաս ու իմանըն ֆըգտանը, հէր տիւրլիւ ֆազիլէթէ, էֆալը գահրամանէյէ, ֆէտաքիարըղա գարշը գարուլարը գահրամագ, պիլ աքս հէր նէվ ալըաղը նէֆասանիյէ, ճինսաթ ու իթիլլալարա սէրպէսթ հօլ ալմագ տէմէք տիր: Իշթէ կիւզէլ Պրանսաճըղըն պու կիւնքի տիւշար օլտուղը ֆէլաքէթլէրին, ճինայէթլէրին վէ իլմիհալլարըն սէրի սէպէպի ֆրանմասօնըլ վասիթասըլլա նէշը ու թամիւ իտիլէն Վասիթիլիգմ տիր»:

Հիլէայլէ: Էմէլիլէ Էքմէլիլի գաղտնան պիր ամէլէ քէնտի հայինաէն մէմնուն իսի Հալպու քի գարըսը բարալա վէ հաթթա պաշղալարընը բարալա հարս իսի Պիր աղլամ պու ատամ ալթ իւսթ օլմուշ պիր սուրէթատ խոնէսինէ ալմէթ իսէր վէ Էսրաֆէնկիգ պիր եօլ իլէ գարըսընա տէր քս «Պու կիւն ֆիլան էֆէնտի պիլիմ ֆապրիգայա կէլմիտի, օրստա պիր աիւրէթ սէգիւ օլուրօր, պուշը իշիտինճէ պաշլաք պիլի իսթիհալ իթմէյէ, վէ հաթթա, աիւրէթ մասալը բարալար թարաֆընտան իճաա իտիլմշ պիր մասալ տըր, աէսի Տօղրուսը պէնիմ պու իշէ աղլըմ իրմէտի նէ՞ տէրսին: Օ տէլիլ ամմա, պու էֆէնտի իշիւն պիր ալիմ տիր աէնիլիյէր վէ պէն օնուն քէօշէ կիւնտէ քիլմալլարլա սօլու պիր օսա կէօրսիւմ — Էյէր իշ պէօյլէ իսէ, պիլ բէք սաստէսիլ իմիլիլ, պու գատար եօրուրմայա նէ լիւզում վար... գէնկին օլալիլմէք իշիւն սիրգաթ իթմէքտէն, պաշղալարըն գաթլ իթմէքտէն պիլի քիմ մէն իսէր... — Ճէվապընը վէրի գարըսը: Զէվճի իսէ, հա հապսիսանէ, տար աղաճը նէ օլաճագ, տէտիլիտէ, գապր, սէն փէք սաֆտէրուն պիր աստմսըն, տէր գօճալընա, թուլմուլաճագ օլուրսագ, չօգ չօգ պիլի իտամ իտէրլէր, օրստան իլէրիտէ գօրգաճագ պիր աիւրէթ գօրգալըլ գալմագ, Էօգ էյէր եաղալանմագալ, իլմէ սահիպի սէրվէթ օլուրուլ...»

Քէնտի զիւլմիւննէ պու մուհաքէմէ հէմ մօղրու վէ հէմ տէ բէք մանիլըլի իսի չիւնքի բուհըն էօլմէլիլի գալպուլ իտիլմէյէճէք օլուրսա, արթըգ ճինայէթ վէ ֆէնալլի մէն իսէճէք հիլ պիր սէտա գալմաղ: (Միւլլաւ):

Բուհըն էօլմէլիլիլի իսպաթ էյլէյէն տէլիլէր, աշիլ զէմանտա ծնըն, հա իլիլ հալէս ճէկնէքսէ մագիարը սասսէք վէ եսիսա սօնարը սուրէքսէ ճէկնէքսէ սիւշարը աղալ պուլընաճաղընը տա իսպաթ վէ թասաթ

խտէրէր: Եւ ապա զորոք պու էօ՛ր պիր թէճրիպէ ու միհնէթ մահալի տիր. հայպու քի ախրէթ տէտիյիմիզ էօմրի տթի խէ. իտրաք վէ իխթիյար սահիպի օլան ինսանըն վասըլ օլաճաղը դայե աիր:

Էօլիւմաէն ոօնրա արթըզ նէ՛ սէվապ վէ նէ՛ տէ քիւֆր իշին հիւրրիյէթ գալմայսճապ, նէտամէթ տէ գապիլ օլմայսճապ տըր: Պի-նաէն ալէյ՝, էյիւէր իլէ էպէտ էյի, ֆէնա-լար տա իլէ էպէտ ֆէնա գալաճապ տըր-լար: Պու թագտիրտէ էյիլէրին միւքեաֆա-թընըն վէ ֆէնալարըն միւճաղաթընըն տա էպէտի օլմասը իյճապ խտէր:

Հիւրը վէ մէսուլ պիր մախլուզըն, էյր եա կէճ, քէնտի էֆալ ու հարաքեաթը հապ-գընտա հիսապա տալէթ օլընմասը թապի տիր: Իշթէ պու սէպէպէ մէպնի ծնըն թէ-ճէլլիսի իքիյէ թէֆրիզ օլունըր, պիրի քհնրի-պէ վէ մուհարէպէ տէվրէսի, տիկէրի տէ միւքնաֆաթ վէ եախօտ միւճաղաթ տէվրէսի:

Ինսան իշին տէվրէի իմթիհան էօլիւթ իլէ պաքանրը: Պու իթիգատ պիլ ճիւմիէ մի-լէլ ու ագլամըն իթիգատը օլտուղը կիպի, ագլ տա պունըր թէեիտ իտէր: Չիւնքի էօլիւմ, բուհա թէսիր վէ նուֆուզ իտէմէզսէտէ. ինսանը թէշքիլ իտէն քհրիպի ինսանի թախրիպ էյիէր: Վէ մատէմ քի պանունը ախլէտ, վէ վաղիֆէ թէքմիլ ինսանա թէ-րէթթիւպ խտէր, չու հալտէ, զայէյի աս-լիյէսինէ նայիլ, տատաթթի էպէտիյէյէ մա-լիք օլմագ վէ եախօտ ծնտան մահրում օլմագ տա քիւքիլ ինսանըն նատիպի օլմալը տըր:

Ճիւնէք հպէսի ճիր: Ճէնապը Հազգ, սա-լիհին բուհընը մութլագա սէվտիյի կիպի, օ-նըն թարաֆընտան տա սէվիլի: Պունա շիւպէ օլունամագ, Վէ մատամ քի սալիհ տայիմա սալիհ գայսճապ տըր, չու հալտէ ծնըն բուհի իլէ Ալլահ արասընտաքի բապը-թայը մէհապալէթ սալիմա պապի գալսճապ տըր: Հէմ տէ հայաթը ուխրէվիյէնին սաա-տէթի միւքիւնիզ օլմագ իպթիզա իտէր օլ-տուղընտան վէ էպէտի օլմայսճապ պիր սաա-տէթին տէ միւքնիլէլ օլմայսճաղընտան, հէր հալտէ, սալիհին միւքեաֆաթընըն էպէ-տի օլմասը իմթինթամ օլունուր:

(Մապաթի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Վոհմ. ֆէր-րադա Կաթոլիկին մահուան առթիւ Սրբազան Գա-հանալապետը ցաւակցական անթիւ հեռագիրներ ընդունուեցաւ վեհապետներէ, նախագահներէ, նախկինպետներէ, (մանուսաղ ֆրանսայի, ուր ալնըան սիրուած եւ յարգուած էր Հանգուցեալ Ծի-րանաւորը), Կրօնական հաստատութիւններէ եւ ա-ռանձնականներէ:

Այս համաշխարհային ցաւակցութեան արտա-յայտութիւնները մասամբ կը մեղմացնեն այն խո-րին ցաւը զոր կը զգայ Ն. Սրբազնութիւնը իր ա-մէնէն կորովի օգնականներուն մէկէն զովուելով:

*** Սրբազան Հայրը Ռուսմանիոյ Գաբուլ թա-գաւորին մահը լսելուն պէս, Պուքէշի Արքեպիս-կոպոս Նէցալէր Գերապայծառին միջոցաւ իր ցա-ւակցութիւնները յայտնեց ֆէրտինանա նոր թա-գաւորին, արքայական ընտանեաց եւ Ռուսմանիոյ կառավարութեան:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԽԱՆ. — Հոկ-տեմբեր 19ին Ս. Յովսէփայ տօնին առթիւ Արհա-պատիւ Յովսէփ Արքեպիսկոպոս Ռոքոսեան Կ. Պատ-րիարքական ֆոխանորդ Գերապայծառը բաղմաթիւ շնորհ աւորութիւններ ընդունեցաւ:

*** Ինչպէս ուրիշ տեղեր, նոյնպէս Պանտրմայի Եկեղեցւոյն մէջ պատարագ եւ պաշտօն մատուց-ուած է Երջանիայիշատակ Պիոս Ժ. Գահանայապե-տին մահուան առթիւ Օգոստոս 23ին: Պանտրմայի մէջ գտնուած գրեթէ բոլոր եւրոպացիները Գաղ-ղիացի, Իտալացի, Աւստրիացի եւ Սպանիացի ներ-կայ եղեր են սգահանդէսին եւ ետքը ամէնքը ըն-դունելութեան սրահը ելլելով իրենց ցաւակցու-թիւնները յայտնած են Գեր. Ս. Վ. Մուրատեանին:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Պաշ-տօնապէս հետեւեալը կը ծանուցուի. — Խորհրդա-րանը, որուն արտասովոր նոտաշրջանը Եւրոպայի մէջ ծագած պատերազմին տարածուելուն հետե-ւանքով փակուած էր Յուլիս 20/2 Օգոստոսին, ա-միս մը ետքը պիտի բացուի, նկատի առնելով ներ-կայ պատերազմին շարունակուելուն եւ ծանրանա-լուն առաջ բերած կայութիւնը: Սակայն յետագ-ման միջոցն երբ աւարտի, պիտի գումարուի եւ նոյն յետագգման ժամանակամիջոցը պիտի լրացուի միեւնոյն նոտաշրջանին մէջ, ըստ տրամադրութեան Սահմանադրութեան փոխիւեալ 7րդ. յօդուածին: Այս սրոշումը վաւերացուեցաւ Կայս. Իրատէսով:

Ներքին գործոց նախարարութիւնը հեռագրով գաւառներուն հաղորդեց Խորհրդարանին բացման յետագգումը: Վերոգրեալ սրոշման համաձայն Խոր-հրդարանը պիտի բացուի յառաջիկայ Դեկտ. 1/14ին:

Դեկտ. 9ին: Քաթողիկոսի ազնուական ընտանիքի մը զաւակն էր: 25 տարեկանին, իր քաղաքացիները զինք ընտրեցին քաղաքապետ ու երբ օրինական տարիքն ունեցաւ, զինքն ընտրեցին երեսփոխան: Մինչեւ 1906, շարունակ վերընտրուեցաւ եւ ա՛ն թուականին եղաւ Ծերակուտական: Գլխաւոր տա՛կան շատ կարեւոր պաշտօններ վարեց ու եղաւ ղեկավար Լոնտոնի երկիցս անցաւ արտաքին գործոց նախարարութեան: Վերջին անգամ, 1910, Ապրիլ 1ին յաջորդեց Մ. Թիթօնի, որ Բարիկի դեսպան կարգուած էր եւ անկէ ի վեր պահեց այս պաշտօնը: Հոնմ, 18.— Վարչապետ Մ. Սալանտրա արտաքին գործոց նախարարութիւնը առժամաբար ստանձնելով ծառ մը արտասանեց: Հանգուցեալ Սան ձուլիանօ մարքիզը ջերմապէս գովելէ հոբ ըսաւ թէ Իտալիոյ արտաքին քաղաքականութիւնը իր ընդհանուր գիծերուն մէջ ասպագային ալ միեւնոյնը պիտի ըլլայ ինչ որ էր տակէ առաջ: Այս գեղեցիկ ուղղութիւնը շարունակելու համար պէտք է ունեւնալ հաստատականութիւն, հայրենիքի իրական շահերուն յստակօրէն նկատումը եւ յանդգնութիւն նով խառն հասուն դատողութիւն մը: Մ. Սալանտրա եզրակացնելով ըսաւ թէ հարկ է որ միտքը ազատ մնայ ամէն նախապաշարումէ եւ ամէն զբաղումէ որ նուիրական հայրենիքին հանդէպ կատարեալ եւ անկեղծ անձնութիւն մը չի ներկայացներ:

Անքիվարի, 19.— Յրանո. Լիւսոմ շոգեմաւը առջի օր այստեղ եկաւ, բերելով ռազմանիւթ ու օդանաւ մը: Իրեն կ'ուղեկցէին Թորփիլանսէր: Նաւը պարպուած միջոցին աւստրիական օդանաւ մը ռումբեր արձակեց, սակայն չկրցաւ զնա պատճառել. իրիկուան հրք շոգեմաւը կը հեռանար, աւստրիական օդանաւը դարձեալ պոսպալ նետեց, բայց առանց զնա պատճառելու: Այս առաւել, աւստրիական երկու նաւ, որ դուրս ելեր էին Գա-

թարոյէն եւ մտեր էին Անթիվարիի նաւահանգիստը, գ'շերը լոյսերնին մարած, զօրեղապէս ռմբակոծեցին նաւահանգիստին վաճառատունները, բաւական ծանր վնաս պատճառելով:

Վալօնա, 19 (Ի. Գ.)— Կացութիւնը խիստ ծանրակշիւ հանգամանք ստացաւ գործողութեանը հետեւանքով Եպիբացի հրոսակումբերու, որոնք սարսափի կ'ենթարկեն Ալպանիոյ բնակչութիւնը, նպատակ ունենալով ուժի զօրութեամբ ջնջել Լոնտոնի ժողովին որոշումները: Բնակչութիւնը խմբովին Վալօնա կ'ապաստանի, տեղական իշխանութեան կողմէ պաշտպանութիւն յուսալով: Բազմաթիւ փոխտաւաններ մեծ զրկանքներու ենթարկուած են Վալօնայի մէջ: Միջոցները կը պակսին եւ կառավարութիւնը շատ զբաղած ըլլալուն՝ չի կրնար անոնց օգնել: Ալպանացիները շարունակ օգնութիւն կը խնդրեն Իտալիայէն, որ իբր Լոնտոնի դաշնագիրը ստորագրող տէրութիւն մը, իրաւունք եւ պարտականութիւն ունի միջամտելու համաձայնութեամբ, վերջ դնելու համար հելլէն հրոսակումբերու ստեղծած անտանելի կացութեան:

Լոնսոն, 20 (Ի. Գ.) Մոնիթինկ Փօսթ կը ծանուցանէ թէ դաշնակիցները վերադարձած են Օսթէնտը: Բեդրոկրաս, 21 Հոկտ. Վերին սպայակոյակէն, Բիւրցա գետին հիւսիսային շրջանին մէջ դէպի վարձաւիս տանող գիծերը զբաւող գերման զօրքերը ետ մղուեցան եւ մեծ խուճապով կը նահանջեն:

Պերլին, 20 (Օ. Գ.) — Կը ծանուցուի թէ 3000 գերմանացիներ գրաւած են Պլանքեմպուրկը Օսթէնտի հիւսիս-արեւմտեան կողմը:

Պերլին, 22.— Գերմանական Էմսէն յաճանաւը դարձեալ հինգ անգլիական նաւեր ընկղմեց:

— Թայմզ կը ծանուցանէ որ գերման ընդծովեաներ հարկադրած են անգլիական երկու թնդանօթակիրներ որ հեռանան Ֆրանսական ծովափերէն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	673
Պիոս Ժ.	676
Եօթնեակ Քրիստոնէի	677
Հռոմէական եկեղեցւոյ յայտնողութեան օրէնք	678
Ֆարմասօնօքիւնը	681
Այլեւայլ	683
Գարօյիք Մէգնէպի էսապար	684
Տեղեկագրական	686

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆԻՄ ԲԱԳՐԱՊԵՏ



ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԹԵՂԻՊՈԱՇԵԱՆ

ԲՍԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 — մէկ թիւ՝ 1 դհկ. — Արսասան-
ման տար. Ֆր. 10. վեցամս 5. — Վճարմունք կանխիկ են.

ՀԱՍՑԷ. — Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.

Պոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր խփական անունը ծանուցանել Խմբագրատեղին:
4. — Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5. — Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէջ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնը
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Բրիտտ. Վարդապետութեան. գին 2 դհկն.

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

Եսթեր՝ ողբերգութիւն Ռաֆինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստամենայ-
նի ճոխ և ի յիշակի է որ և իցէ տպագրական գործոց համար: Ար տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաբխագիրներ, քարտեր, քարդ-ատրէտներ,
մահազգրներ, եւն. Գլխերը անմեղելի կերպով աման են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

Vienne I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau:

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy

Agences à Stamboul, Péra et Scatari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. 1/2 % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.